ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/88

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2017թ. թիվ 26-3/23022-17 գրությամբ «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 08.12.2017թ. թիվ 01/13.1/2176-17 և 11.12.2017թ. թիվ 01/13.1/2182-17 գրությունների հիման վրա, 12.12.2017թ. թիվ 26-3/23022-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Վահագն Խաչատրյան Աբգարի»

Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ին ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, կարծիք ստանալու նպատակով 12.12.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/23057-17 գրությամբ, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով դիմել է «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ին:

Խորհրդի սույն որոշումն կայացվելու օրվա դրությամբ Մասնակցի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 15.12.2017թ. ժամը 11:20-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 08.12.2017թ. թիվ 01/13.1/2176-17 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից 10.11.2017թ. հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով համակարգչային տեխնիկայի, պատճենահանող սարքավորումների և նյութերի գնման ընթացակարգի շրջանակում առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ն:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 15.12.2017թ. ժամը 11:20-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/88 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/88 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ի հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել հրավերի թիվ 6 հավելվածով նախատեսված գրությունը, իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված թիվ 6.1:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.12.2017թ. թիվ 26-3/23022-17 գրությունը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 08.12.2017թ. թիվ 01/13.1/2176-17 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե '

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության

համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կազմակերպված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ն հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է

իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Մասնակիցը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հավելվածի համաձայն՝ «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ն պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ի հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել հրավերի թիվ 6 հավելվածով նախատեսված գրությունը, իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված թիվ 6.1:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի***

կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով Խորհուրդը գտնում է, որ «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ի կողմից «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, քանի որ Մասնակիցը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով չի ներկայացրել նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը, որի հետևանքով մասնակցի մասնակցությունը գնման գործընթացին դադարեցվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2017թ. թիվ 26-3/23022-17 գրությամբ «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ին (ՀՎՀՀ՝ 74352663) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Վահագն Խաչատրյան Աբգարի» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**